Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
օգոստոսի 11-ի N 1313-Լ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

1. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակն է աշխարհաքաղաքական իրադրության, արտաքին սահմանափակումների, շրջանառու միջոցների թանկացման հետևանքների մեղմման, պարենային անվտանգության ապահովման համար 1 հա աշնանացան ցորենի մշակության ծախսերի, մասնավորապես՝ սերմի, պարարտանյութի և դիզելային վառելիքի ձեռքբերման ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով նպաստել աշնանացան ցորենի ցանքատարածությունների ավելացմանը՝ նաև չմշակվող հողերի օգտագործման միջոցով, տեղական արտադրության ցորենի ծավալների և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացմանը, ցորենի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովմանը:

2. Ծրագիրը կիրականացվի 2022 թվականին Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում՝ բացառությամբ Արարատի և Արմավիրի մարզերի:

3. Ծրագրի մասնակիցներն են՝

1) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն).

2) Հայաստանի Հանրապետության մարզպետարանները (այսուհետ՝ մարզպետարան).

3) Հայաստանի Հանրապետության համայնքները (այսուհետ՝ համայնք).

4) գյուղատնտեսությունում տնտեսավարողները՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերեր (այսուհետ՝ շահառու):

4. Ծրագրի շահառու կարող է հանդիսանալ մինչև 100 հա մակերեսով (բացառությամբ տնամերձ հողատարածքների) ցորենի ցանքատարածություններ մշակող տնտեսավարողը, ընդ որում, ծրագրի շրջանակում յուրաքանչյուր շահառուի կողմից մշակվող ցանքատարածությունների հանրագումարը չի կարող գերազանցել 100 հա-ը, իսկ միևնույն հողամասի նկատմամբ համասեփականատերերի

առկայության դեպքում ծրագրից կարող է օգտվել համասեփականատերերից միայն մեկը:

5. Ծրագրի շրջանակում ցորենի մշակության, ագրոտեխնիկական միջոցառումների կիրառման, սերմերի ախտահանված լինելու վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով նախարարությանը դիմած շահառուներին կտրամադրվի անվճար խորհրդատվություն:

6. Ծրագրի շրջանակում պետք է պարտադիր ցանք կատարվի մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ը, իսկ ցածրադիր շրջաններում, եղանակային պայմաններից կախված, մինչև 2022 թվականի նոյեմբերի 1-ին տասնօրյակը:

7. Ծրագրի շրջանակում 1 հա-ի հաշվով աշնանացան ցորենի մշակության ծախսերի մասնակի փոխհատուցման նպատակով գնահատվել են սերմի, պարարտանյութի և դիզելային վառելիքի ձեռքբերման ծախսերը շուրջ 235,5 հազար դրամ: 1 հա-ի հաշվով յուրաքանչյուր շահառուի կփոխհատուցվի՝

1) հավաստագրված, աղյուսակում ընդգրկված սորտերի էլիտային կամ 1-ին վերարտադրության սերմերով ցանքի դեպքում՝ 120,0 հազար դրամ (սերմի, պարարտանյութի և դիզելային վառելիքի ձեռքբերման ծախսերի հաշվով).

2) չհավաստագրված սերմերով ցանքի դեպքում՝ 70,0 հազար դրամ (միայն պարարտանյութի և դիզելային վառելիքի ձեռքբերման ծախսերի հաշվով):

8. Փոխհատուցման գումարը գնահատվել է սերմի, ազոտական պարարտանյութի և դիզելային վառելիքի ձեռքբերման ծախսերի շուրջ 50 տոկոսը՝ պայմանավորված վերջիններիս ձեռքբերման գների աճով:

9. Ծրագրին մասնակցելու համար շահառուները մինչև 2022 թվականի հոկտեմբերի 15-ը դիմում են համայնքի կամ բնակավայրի վարչական ղեկավարին՝ դիմումում նշելով մշակվող (նախատեսվող) ցորենի ցանքատարածության տեղը, մակերեսը, սորտերը, բանկային հաշվեհամարը:

10. Դիմումին կից շահառուն ներկայացնում է նաև՝

1) անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

2) անշարժ գույքի (հողամասի) նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող պետական գրանցման վկայականի (վկայականների) պատճենը

(պատճենները), պայմանագրային հիմունքներով վարձակալության (ենթավարձակալության) կամ օգտագործման դեպքում՝ նաև նոտարական կարգով վավերացված այդ պայմանագրի (պայմանագրերի) պատճենը (պատճենները), կամ համայնքի կամ բնակավայրի վարչական ղեկավարի կողմից տրված տեղեկանքը՝ հողամասը շահառուի կողմից փաստացի օգտագործվելու վերաբերյալ (տեղեկանքում պարտադիր նշվում է շահառուի կողմից հողամասի փաստացի օգտագործման պատճառների վերաբերյալ տեղեկատվություն):

11. Համայնքի ղեկավարը դիմումը (նաև բնակավայրի վարչական ղեկավարին դիմած շահառուների դիմումները) ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում շահառուի հետ կնքում է ծրագրի մասնակցության պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր, որի օրինակելի ձևը մշակում և հաստատում է նախարարությունը և մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ը հրապարակում նախարարության կայքում: Պայմանագրում ամրագրվում է դրույթ՝ կատարվելիք ցանքի տարածքի մակերեսի վերաբերյալ), ստեղծում շահառուների բանկ:

12. Շահառուները ոչ ուշ, քան մինչև 2023 թվականի ապրիլի 1-ը փոխհատուցում ստանալու նպատակով դիմում են համայնքի կամ բնակավայրի վարչական ղեկավարին՝ դիմումում նշելով ցորենի փաստացի առկա ցանքատարածության տեղը, մակերեսը և հավաստագրված սերմերով ցանք կատարելու դեպքում՝ ներկայացնում նաև սերմերի հավաստագրերի պատճենները, սերմերի պարկերի պիտակների բնօրինակները, սերմերի հանձնման-ընդունման ակտը, որում պետք է պարտադիր նշված լինեն սերմերի սորտերը: Նշված փաստաթղթերի բացակայության դեպքում շահառուն կհամարվի չհավաստագրված սերմերով ցանք կատարող:

13. Համայնքի ղեկավարը ծրագրի 12-րդ կետում նշված դիմումի և փաստաթղթերի (առկայության դեպքում) պատճենները 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է մարզպետարան:

14. Համայնքի ղեկավարի կողմից սահմանված կարգով իրականացվում է համատարած մոնիթորինգ՝ ցորենի սերմերի ծլելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև 2023 թվականի մայիսի 1-ը:

15. Համայնքի ղեկավարը մոնիթորինգն իրականացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է իր կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները և մոնիթորինգի դրական եզրակացությամբ շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է նախարարություն՝ նախարարության կողմից մշակված ու հաստատված և մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ը համայնքին և մարզպետարանին տրամադրված ձևաչափով: Կից ներկայացվում է նաև յուրաքանչյուր շահառուի մոտ իրականացված մոնիթորինգի արձանագրությունը:

16. Մարզպետարանը, ցորենի սերմերի ծլելուց հետո, բայց ոչ ուշ, քան 2023 թվականի մայիսի 1-ը, ծրագրի 13-րդ կետում նշված տեղեկատվության հիման վրա, իր կողմից սահմանված կարգով իրականացնում է ընտրանքային մոնիթորինգ, ընդ որում, մոնիթորինգի ընդգրկելիության նվազագույն շեմը պետք է կազմի մարզի շահառուների թվի առնվազն 15 %-ը:

17. Մարզպետարանը մինչև 2023 թվականի մայիսի 10-ն ամփոփում է իր կողմից իրականացված ընտրանքային մոնիթորինգի արդյունքները և ներկայացնում է նախարարություն՝ ծրագրի 15-րդ կետով նախատեսված ձևաչափով:

18. Նախարարությունն ամփոփում է ծրագրի 15-րդ կետով նշված տեղեկատվությունը և մոնիթորինգի արձանագրությունները՝ դրանք ստանալուց հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում, և փոխհատուցման համար նախատեսված գումարները փոխանցում համայնքների հաշվեհամարներին:

19. Համայնքները ծրագրի 18-րդ կետով նախատեսված գումարները ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում փոխանցում են շահառուների բանկային հաշվեհամարներին և 10 աշխատանքային օրվա ընթացքում նախարարություն են ներկայացնում վճարման ցուցակները և վճարումները հավաստող փաստաթղթերը:

20. Ծրագրի 17-րդ կետին համապատասխան ներկայացված մոնիթորինգի բացասական արդյունքների առկայության դեպքում (ծրագրի պայմանների կամ 11-րդ կետում նշված պայմանագրի դրույթների խախտում), տվյալ պայմանագրի (պայմանագրերի) շրջանակում փոխհատուցման գումար չի տրամադրվում, իսկ

տրամադրված լինելու դեպքում նախարարության կողմից համայնքին ներկայացվում է պետական բյուջե հետվերադարձման պահանջ շահառուին փոխհատուցված և մոնիթորինգի համար համայնքին տրամադրված գումարների մասով: Ընդ որում, մոնիթորինգի համար տրամադրված գումարը հետվերադարձման ենթակա է տվյալ շահառուին փոխհատուցված գումարի ծրագրի 22-րդ կետում նշված տոկոսային կետերի չափերին համամասնորեն: Հետվերադարձման պահանջ ներկայացվելու դեպքում շահառուի և համայնքի կողմից 1-ամսյա ժամկետում գումարները չվճարելու պարագայում այն գանձվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

21. Նախարարությունը մինչև 2023 թվականի օգոստոսի 1-ն ուսումնասիրում է համայնքների կողմից ծրագրի 19-րդ կետով ներկայացված փաստաթղթերը, և անճշտությունների առկայության դեպքում համայնքներին առաջարկվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում կատարել համապատասխան ճշգրտումներ ու տեղեկատվություն ներկայացնել նախարարություն: Ճշգրտումից հետո շահառուներին չփոխանցված գումարները 1-ամսյա ժամկետում ենթակա են վերադարձման պետական բյուջե:

22. Նախարարությունը մինչև 2023 թվականի սեպտեմբերի 15-ը մոնիթորինգի իրականացման համար նախատեսված գումարները (մինչև 5000 հա-ի մոնիթորինգի դեպքում փոխհատուցված գումարի 3%-ի չափով, իսկ 5000 հա-ից ավելի դեպքում՝ փոխհատուցված գումարի 5%-ի չափով) փոխանցում է համայնքների հաշվեհամարներին:

23. Համայնքները մինչև 2023 թվականի դեկտեմբերի 1-ը նախարարություն են ներկայացնում ամփոփ հաշվետվություն՝ ծրագրի շրջանակում կատարված աշնանացան ցորենի ցանքատարածքների, միջին բերքատվության և համախառն բերքի վերաբերյալ:

24. Ծրագրի հնարավոր ռիսկերն են՝

1) շրջանառու միջոցների գների թանկացումները.
2) եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով բերքի կորուստը.
3) չհավաստագրված սերմերի ցածր որակը.

4) սերմերի ծլունակության անբավարար մակարդակը.

5) փոխարժեքի զգալի տատանումները:

25. Ծրագրի ռիսկերի մեղմմանն են ուղղված 1 հա-ի հաշվով ծախսերի մասնակի փոխհատուցումը, ցորենի ցանքատարածությունների ապահովագրության հնարավորությունը:

26. Ծրագրի ֆինանսավորումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից: Ծրագրի բյուջեն կկազմի շուրջ 6,8 մլրդ դրամ, որի գնահատման համար հիմք են հանդիսացել ծրագրով նախատեսված 75,0 հազար հա (25,0 հազար հա-ը հավաստագրված սերմերով ցանքի իրականացում, իսկ 50,0 հազար հա-ը՝ չհավաստագրված սերմերով) աշնանացան ցորենի հաշվով փոխհատուցման և համայնքներին մոնիթորինգի իրականացման համար տրվող գումարները (հաշվարկվել է փոխհատուցվող գումարի 4,0 %-ը՝ շուրջ 260,0 մլն դրամ): 2022 թվականի համար ծրագրի բյուջեն գնահատվել է 3,9 մլրդ դրամ, իսկ 2023 թվականի համար՝ 2,9 մլրդ դրամ:

27. Ծրագրի իրականացումից ակնկալվում է շուրջ 75,0 հազար հա աշնանացան ցորենի ցանքի իրականացում, նոր հողատարածքների շրջանառության մեջ ներգրավում, ինչպես նաև շուրջ 25 %-ով ցորենի համախառն բերքի ավելացում:

Աղյուսակ

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՓԱՓՈՒԿ ՑՈՐԵՆԻ ՍՈՐՏԵՐԻ

1.	Ախթամար	Akhtamar	Ахтамар
2.	Ալեկսեիչ	Alekseich	Алексеич
3.	Ամալիա	Amalia	Амалия
4.	Անի 326	Ani 326	Ани 326
5.	Արա	Ara	Ара
6.	Արագած	Aragats	Арагац
7.	Արայ	Aray	Арай
8.	Արեգակ	Aregak	Арегак
9.	Արմիկ	Armik	Армик
10.	Արմյանկա 60	Armyanka 60	Армянка 60
11.	ԱՐՄՍԻՄ	ARMSIM	АРМСИМ
12.	Բատկո	Batko	Батько
13.	Բեզոստայա 1	Bezostaya 1	Безостая 1
14.	Բեզոստայա 100	Bezostaya 100	Безостая 100
15.	ԳԱԽ 5	GAKH 5	ГАХ 5
16.	Գռացիա	Gracia	Грация
17.	Գռոմ	Grom	Гром
18.	ԳՍԿ-95	GSK-95	ГСК-95
19.	Գրաֆ	Graf	Граф
20.	Դավիթ 1	Davit 1	Давид 1
21.	Դոնսկոյ սյուրպրիզ	Donskoy syurpriz	Донской сюрприз
22.	Դվին	Dvin	Двин
23.	ԵԳԿ 90	EGK 90	ЕГК 90
24.	Եսաուլ	Esaul	Есаул
25.	Էլթան	Eltan	Элтан
26.	Էջմիածին-2700	Ejmiatsin-2700	Эчмиадзин-2700
27.	Լալվարի 10	Lalvari 10	Лалвари 10
28.	Լեբեդ	Lebed	Лебедь
29.	Լենինականի 5	Leninakani 5	Ленинакани 5
30.	Կարավան	Karavan	Караван
31.	Կոլլեգա	Collega	Коллега
32.	Կոտայք	Kotayk	Котайк

33.	Հայասա	Hayasa	Айаса
34.	Մակար	Makar	Макар
35.	Մերձավանի 149	Merdzavani 149	Мердзавани 149
36.	Միրլեբեն	Mirleben	Мирлебен
37.	Մոսկվիչ	Moskvich	Москвич
38.	Յուբիլեյնայա 100	Yubileynaya 100	Юбилейная 100
39.	Յուկա	Yuka	Юка
40.	Նաիրի 68	Nairi 68	Наири 68
41.	Նեմրութ	Nemrut	Немрут
42.	Նժդեհ	Nzhdeh	Нжде
43.	Նիրսա	Nirsa	Нирса
44.	Նոտա	Nota	Нота
45.	Ոսկեհասկ	Voskehask	Воскеаск
46.	Պրիկումսկայա 140	Prikumskaya 140	Прикумская 140
47.	Ռիմա	Rima	Рима
48.	Ռոստովչանկա-5	Rostovchanka-5	Ростовчанка-5
49.	Սաթենի 22	Sateni 22	Сатени 22
50.	Սթիվենս	Stevens	Стивенс
51.	Սիլա	Sila	Сила
52.	Ստեպ	Step	Степ
53.	Սյունիք	Syunik	Сюник
54.	Վ-301	W-301	В-301
55.	Վան	Van	Ван
56.	Վասսա	Vassa	Васса
57.	Վարս	Vars	Варс
58.	Վեսթոն	Weston	Вестон
59.	Վելենա	Velena	Велена
60.	Վիկտորիա	Victoria	Виктория
61.	Տաթև	Tatev	Татев
62.	Տանաիս	Tanais	Танаис
63.	Տանյա	Tanya	Таня
64.	Տարոն	Taron	Тарон
65.	Քրիստինե	Christine	Кристине

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Բ. ԲԱԴԱԼՅԱՆ

23.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ